ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՊԵԿ-ՀՄԱ-ԾՁԲ-25/1

ք.Երևան «06» Հոկտեմբերի 2025թ.

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն, ի դեմս ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղարի ժամանակավոր պաշտոնակատար Դ.Մաթևոսյանի, որը գործում է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Հ.Եսայանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է շարժական կապի ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարան ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **640 000 (Վեց հարյուր քառասուն հազար)** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը և պայմանագրով նախատեսված պայմանները տարածվում են 2025 թվականի հոկտեմբերի 31-ից ծագած փաստացի հարաբերությունների նկատմամբ:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը,

իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկիառկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկըներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Կատարողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը

7.11 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.12 Սույն պայմանագիրը կազմված է 15 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 3.1 և N 4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.13 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պետական եկամուտների կոմիտե
ք. Երևան, Մ.Խորենացու-3,7
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011054013
ՀՎՀՀ 02647057
ՀՀ ՊԵԿ գլխավոր քարտուղարի ժամանակավոր
պաշտոնակատար՝

Դ.Մաթևոսյան

(ստորագրություն)

Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ
ք.Երևան, Ազատության-24/1
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ

Հ/Հ 163004038861
ՀՎՀՀ 02500052
«ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ-ի տնօրեն՝

Հ.Եսայան

(ստորագրություն)

Կ.Տ

Հավելված N 1
«06» Հոկտեմբերի 2025 թ. կնքված
ՊԵԿ-ՀՄԱ-ԾՁԲ-25/1 ծածկագրով գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*
Շարժական կապի ծառայության

Հ/Հ	Ծառայության*				
	Անվանումը և միջանցիկ կոդը	**չ/մ**	**Ընդհանուր գինը ՀՀ դրամ**	**Մատուցման վայրը**	**Մատուցման ժամկետը**
1	Շարժական կապի ծառայություն CPV 72411100/7	դրամ	640 000	Հավելված 1, 2, 3 և 4 ում նշված հասցեներում	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող օրվանից հաշված առավելագույնը 62 օրացուցային օր:

Շարժական կապի ծառայություններ

Կատարողը պետք է ապահովի շարժական կապի ծառայություն, ըստ ստորև ներկայացված պահանջների.

Ծառայություն	Հասցե	Արագություն	Քանակ
Կորպորատիվ VPN (data)	ք.Երևան, Ահարոնյան 12/3	Առնվազն 300 Մբ/վ	1
Կորպորատիվ VPN (data)	ք.Դիլիջան, Պարզ լիճ 5	Առնվազն 300 Մբ/վ	1
Շարժական / Mobile VPN անսահմանափակ	ՀՀ ՊԵԿ տարածքներ	Առնվազն 20 Մբ/վ	60

- Առաջարկվող data sim քարտերը պետք է կգտնվեն նույն վիրտուալ ցանցում (vlan):
- Քարտերը պետք է աշխատեն (համատեղելի լինեն) **Samsung Galaxy Tab S9** համակարգչային պլանշետների հետ:

- Vlan-ը պետք է հասնի ՀՀ ՊԵԿ ք. Երևան Ահարոնյան 12/3 և ք. Դիլիջան Պարզ Լիճ 5 հասցեներ:
- Ծառայությունը պետք է ապահովված լինի ՀՀ ամբողջ տարածքում, մասնավորապես 1,2,3,4 հավելվածներում նշված հասցեներում:

Որակի պահանջներ	Պայմանագրի գործողության ընթացքում՝ • Հավելված 1,2,3 -ի որևէ կետում կապի խափանումների (բացակայությունների) քանակը չպետք է գերազանցի 4-ը: Սույն դրույթի մասով խափանում է համարվում կապի բացակայությունը՝ յուրաքանչյուր խափանման դեպքում 60 րոպեից ավելի ժամանակով: • Հավելված 4-ի որևէ կետում կապի խափանումների (բացակայությունների) քանակը չպետք է գերազանցի 6-ը: Սույն դրույթի իմաստով խափանում է համարվում կապի բացակայությունը՝ յուրաքանչյուր խափանման դեպքում 120 րոպեից ավելի ժամանակով:
	Մեկ ամսվա ընթացքում հավելված 1,2,3-ի որևէ կետում կապի խափանումների (բացակայությունների) ժամանակահատվածը չպետք է գերազանցի 120 րոպեն, իսկ հավելված 4-ի որևէ կետում՝ 240 րոպեն: Սույն դրույթի իմաստով կապի խափանման (բացակայության) ժամանակը հաշվարկվում է որպես մեկ ամսվա ընթացքում տվյալ կետում կապի բոլոր խափանումների (բացակայությունների) ժամանակահատվածների հանրագումար:

Հավելված 1

N	Անվանումը	Հասցեն
1.	ՀՀ ՊԵԿ «Ջի Սոլյուշնս» ՊՈԱԿ, «Ուսումնական կենտրոն» ՊՈԱԿ	ք.Երևան, Ահարոնյան 12/3
2.	ՀՀ ՊԵԿ պահուստային հանգույց	ՀՀ Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Պարզ լիճ 5

Հավելված 2

N	Անվանումը	Հասցեն
1.	Պետական սահմանի ցամաքային անցման կետերում մաքսային սպասարկման և հսկողության վարչություն	ՀՀ Շիրակի մարզ, գյուղ Բավրա, Գյումրի-Նինոծմինդա մայրուղի 63/4
2.	Պետական սահմանի ցամաքային անցման կետերում մաքսային սպասարկման և հսկողության վարչություն	ՀՀ Տավուշի մարզ, գ. Բագրատաշեն 19 փ. թիվ 69
3.	Պետական սահմանի ցամաքային անցման կետերում մաքսային սպասարկման և հսկողության վարչություն	ՀՀ Լոռու մարզ, գ. Գոգավան, գ. Պրիվոլնոյե

4.	Պետական սահմանի ցամաքային անցման կետերում մաքսային սպասարկման և հսկողության վարչություն	ՀՀ Սյունիքի մարզ, Մեղրի համայնք, գ.Կարճևան, Մայրուղի 4
5.	Պետական սահմանի ցամաքային անցման կետերում մաքսային սպասարկման և հսկողության վարչություն	ՀՀ Տավուշի մարզ, գ.Այրում, Երկաթուղային 20, ք.Ալավերդի Մադան թաղամաս (Ջիլիզա)
6.	Կենտրոնական ապարատ	ք.Երևան, Մ.Խորենացու 3,7 և 7ա
7.	Արտաքին տնտեսական գործունեության մաքսային սպասարկման և հսկողության վարչություն, Մաքսանենգության դեմ պայքարի վարչություն, Հետբացթողումային հսկողության և ստուգումների վարչություն, «Ուսումնական կենտրոն» ՊՈԱԿ	ք.Երևան, Ծովակալ Իսակովի 10
8.	Էլեկտրոնային առևտրի և օդային տրանսպորտով իրականացվող փոխադրումների վարչություն, ՀՕՀՎ թիվ 24 տարածքային կետ-բաժին	Երևան – 42, «Զվարթնոց» օդանավակայան
9.	Արտաքին տնտեսական գործունեության մաքսային սպասարկման և հսկողության վարչություն	Շիրակի մարզ Գյումրի համայնքի Թբիլիսյան խճուղի 2/14

Հավելված 3

N	Անվանումը	Հասցեն
1.	Հարկ վճարողների ընթացիկ հսկողության հարկային տեսչություն-վարչություն (ՀՎԸՀՀՏՎ), Հարկային վարչարարության կազմակերպման, դիտարկման և հսկողության վարչություն, Հարկային տեղեկատվության և ռիսկերի վերլուծության վարչություն, Հարկ վճարողների սպասարկման վարչություն (ՀՎՍՎ), ՀՎՍՎ թիվ 20 բաժին, ՀՎՍՎ թիվ 1 բաժին	ք.Երևան, Կոմիտաս 35
2.	Տեղեկատվական տեխնոլոգիաների վարչություն, Հետաքննության և օպերատիվ-հետախուզության վարչություն (ՀՕՀՎ), ՀՕՀՎ թիվ 11, 21, 22 բաժիններ, ՀՎՍՎ թիվ 3 բաժին, Ոչ առևտրային կազմակերպությունների հսկողության բաժին	ք.Երևան,Դեղատան 3
3.	Ներքին անվտանգության վարչություն	ք.Երևան, Անդրանիկի փող. 37/1

4.	Մաքսանենգության դեմ պայքարի վարչություն /շնագիտական կենտրոն/	ք.Երևան, Հյուսիսային փող. 6
5.	Էլեկտրոնային առևտրի և օդային տրանսպորտով իրականացվող փոխադրումների վարչություն	ք.Երևան, Տիգրան Մեծ 1-ին նրբ.
6.	Իրավաբանական վարչություն, ՀՎՍՎ թիվ 2 բաժին	ք.Երևան, Ս. Դավիթ 87 և 87ա
7.	Ներքին աուդիտի վարչություն, ՀՎԸՀՀՏՎ թիվ 3 և 4 բաժիններ, ՀՎՍՎ թիվ 4 բաժին	ք.Երևան, Շինարարների փ. 3/1
8.	ՀՎԸՀՀՏՎ թիվ 1 և 5 բաժիններ, ՀՎՍՎ թիվ 5 բաժին, ՀՕՀՎ ոլորտային թիվ 3 բաժին	ք.Երևան, Մոլդովական 41/3
9.	ՀՎԸՀՀՏՎ թիվ 2 և 6 բաժիններ, ՀՎՍՎ թիվ 6 բաժին, ՀՕՀՎ ոլորտային թիվ 4 բաժին	ք.Երևան, Մանթաշյան փ. 55
10.	ՀՎԸՀՀՏՎ թիվ 11 բաժին, ՀՎՍՎ թիվ 11 բաժին, ՀՕՀՎ թիվ 17 բաժին	ՀՀ Շիրակի մարզ, ք.Գյումրի, Հովսեփյան 1

Հավելված 4

N	Անվանումը	Հասցեն
1.	Էլեկտրոնային առևտրի և օդային տրանսպորտով իրականացվող փոխադրումների վարչություն	ՀՀ Շիրակի մարզ, «Շիրակ» օդանավակայան
2.	Արտաքին տնտեսական գործունեության մաքսային սպասարկման և հսկողության վարչություն	ՀՀ Լոռու մարզ, ք.Վանաձոր, Մոսկովյան 44
3.	Արտաքին տնտեսական գործունեության մաքսային սպասարկման և հսկողության վարչություն	ՀՀ Սյունիքի մարզ, Սիսիան-Երևան մայրուղու 7-րդ կմ, Շաքե համայնք
4.	ՀՎԸՀՀՏՎ թիվ 7 բաժին, ՀՎՍՎ թիվ 7 բաժին, ՀՕՀՎ թիվ 16 բաժին	ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Աշտարակ, Պռոշյան 29
5.	ՀՎԸՀՀՏՎ թիվ 9 բաժին, ՀՎՍՎ թիվ 9 բաժին, ՀՕՀՎ թիվ 19 բաժին	ՀՀ Արարատի մարզ, ք.Արտաշատ, Օգոստոսի 23, թիվ 83

6.	ՀՎԸՀՀՏՎ թիվ 10 բաժին, ՀՎՍՎ թիվ 10 բաժին, ՀՕՀՎ թիվ 13 բաժին	ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք.Գավառ, Հերոս քազաք Նովորոսիյսկի 4
7.	ՀՎԸՀՀՏՎ թիվ 14 բաժին /Սյունիք/, ՀՎՍՎ թիվ 18 բաժին, ՀՕՀՎ թիվ 20 բաժին /Սյունիք/	ՀՀ Սյունիքի մարզ, ք.Գորիս, Տաթևանցու 9
8.	ՀՎԸՀՀՏՎ թիվ 12 բաժին, ՀՎՍՎ թիվ 12 բաժին, ՀՕՀՎ թիվ 20 բաժին /Վայոց Ձոր/	ՀՀ Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգնաձոր, Նարեկացի 8/3
9.	ՀՎԸՀՀՏՎ թիվ 8 բաժին, ՀՎՍՎ թիվ 8 բաժին, ՀՕՀՎ թիվ 18 բաժին	ՀՀ Արմավիրի մարզ, ք.Էջմիածին, Նար-Դոսի 11
10.	ՀՎԸՀՀՏՎ թիվ 13 բաժին, ՀՎՍՎ թիվ 13 բաժին, ՀՕՀՎ թիվ 14 բաժին	ՀՀ Տավուշի մարզ, ք.Իջևան, Անկախության 12
11.	ՀՎՍՎ թիվ 13 բաժին (Նոյեմբերյանի բաժին)	ՀՀ Տավուշի մարզ, ք.Նոյեմբերյան, Երևանյան 4
12.	ՀՎԸՀՀՏՎ թիվ 14 բաժին /Սյունիք/, ՀՎՍՎ թիվ 14 բաժին, ՀՕՀՎ թիվ 20 բաժին /Սյունիք/	ՀՀ Սյունիքի մարզ, ք.Կապան, Մինասյան փողոց 20ա
13.	Պետական սահմանի ցամաքային անցման կետերում մաքսային սպասարկման և հսկողության վարչություն	ՀՀ Սյունիքի մարզ, ք.Մեղրի, Անդրանիկի 2/11
14.	ՀՎԸՀՀՏՎ թիվ 15 բաժին, ՀՎՍՎ թիվ 15 բաժին, ՀՕՀՎ թիվ 12 բաժին	ՀՀ Կոտայքի մարզ, ք.Աբովյան, Բարեկամության հրապարակ-1
15.	ՀՎԸՀՀՏՎ թիվ 15 բաժին, ՀՎՍՎ թիվ 19 բաժին, ՀՕՀՎ թիվ 12 բաժին	ՀՀ Կոտայքի մարզ, ք.Հրազդան, Սպանդարյան փ 24/1-24/2
16.	ՀՎԸՀՀՏՎ թիվ 10 բաժին, ՀՎՍՎ թիվ 10 բաժին, ՀՕՀՎ թիվ 13 բաժին	ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք.Մարտունի, Շահումյան 2
17.	ՀՀ ՊԵԿ Փոքր ՀՎՏՎ թիվ 10 բաժին /Գեղարքունիք/, ՀՎՍՎ թիվ 17 բաժին/Սևան/, ՕՀՎ 26 բաժին/Սևան/	ք.Սևան, Սայաթ-Նովա 1/1
18.	ՀՎԸՀՀՏՎ թիվ 14 բաժին /Սյունիք/, ՀՎՍՎ թիվ 14 բաժին, ՀՕՀՎ թիվ 20 բաժին /Սյունիք/	ՀՀ Սյունիքի մարզ, ք.Սիսիան, Սիսակյան 41գ
19.	ՀՎԸՀՀՏՎ թիվ 16 բաժին, ՀՎՍՎ թիվ 16 բաժին, ՀՕՀՎ թիվ 15 բաժին	ՀՀ Լոռու մարզ, ք.Վանաձոր, Վարդանանց 11
20.	Գործերի կառավարման վարչություն /ավտոտնտեսություն/	ք. Երևան, Սևանի 104/2

21.	ՀՎԱՎ թիվ 21 բաժին, Գործերի կառավարման վարչություն /պահեստային տարածք/	ք.Երևան, Արարատյան 90
22.	Պետական սահմանի ցամաքային անցման կետերում մաքսային սպասարկման և հսկողության վարչություն	ՀՀ Արմավիրի մարզ գ.Մարգարա

***Գնման գործընթացի արդյունքում կնքվելիք գնման պայմանագրով նախատեսված պայմանները տարածվում են 2025 թվականի հոկտեմբերի 31-ից ծագած փաստացի հարաբերությունների նկատմամբ:**

****Գնման ընթացակարգը կազմակերպվում է «Գնումների մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝ հրատապության հիմքով պայմանավորված մեկ անձից գնման ձևով և ՀՀ կառավարության 04.05.17թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի դ/ պարբերության հիման վրա:**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ պետական եկամուտների կոմիտե
ք. Երևան, Մ.Խորենացու-3,7
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011054013
ՀՎՀՀ 02647057
ՀՀ ՊԵԿ գլխավոր քարտուղարի ժամանակավոր
պաշտոնակատար՝

Դ.Մաթևոսյան
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ
ք.Երևան, Ազատության-24/1
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ

Հ/Հ 163004038861
ՀՎՀՀ 02500052
«ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ-ի տնօրեն՝

Հ.Եսայան
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված N 2
«06» Հոկտեմբերի 2025 թ. կնքված
ՊԵԿ-ՀՄԱ-ԾՁԲ-25/1 ծածկագրով գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

	Ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	Բյուջետային ծախսերի տնտ. դասակ. հոդվածը*	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2025թ. ՀՀ պետական բյուջեի միջոցներով նախատեսված հատկացումների հաշվին, ըստ ամիսների՝ ընդ որում											
				հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	**Ընդամենը**
1	4214	72411100/7	Շարժական կապի ծառայություն											640 000	640 000	**640 000**

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ պետական եկամուտների կոմիտե
ք. Երևան, Մ.Խորենացու-3,7
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011054013
ՀՎՀՀ 02647057
ՀՀ ՊԵԿ գլխավոր քարտուղարի ժամանակավոր
պաշտոնակատար՝

Դ.Մաթևոսյան
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ
ք.Երևան, Ազատության-24/1
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ

Հ/Հ 163004038861
ՀՎՀՀ 02500052
«ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ-ի տնօրեն՝

Հ.Եսայան
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված 3
«06» Հոկտեմբերի 2025 թ. կնքված
ՊԵԿ-ՀՄԱ-ԾՁԲ-25/1 ծածկագրով գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«06» հոկտեմբերի 2025 թ. կնքված
ՊԵԿ-ՀՄԱ-ԾՁԲ-25/1 ծածկագրով գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Հավելված N 4
«06» Հոկտեմբերի 2025 թ. կնքված
ՊԵԿ-ՀՄԱ-ԾՁԲ-25/1 ծածկագրով գնման պայմանագրի

ԾԱՆՈՒՑՈՒՄ

_____ հայտնում է, որ .
ֆինանսական գործակալի անվանումը

1. _____-ի և _____-ի միջև «--» 20 թ. կնքված
պատվիրատուի անվանումը կատարողի անվանումը

«---------/---------» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակում իր և

_____-ի միջև «--» 20 թ-ին կնքվել է «----------» ծածկագրով ֆակտորինգի
կատարողի անվանումը
պայմանագիրը,

2. համաձայն է Պայմանագրի 7.12 կետով սահմանված պահանջներին:

_____ _____
ֆինանսական գործակալի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը) ստորագրությունը

Կ. Տ. (առկայության դեպքում)

«--» 20 թ.